Արձանագրություն N 4
«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/9-ՏԿՆ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» փետրվարի 2016թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պետրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Սարգսյանը և Լ. Հարությունյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

I. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ս. Պետրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

- «Արմեն Նալբանդյան Նիկոլայի» ԱՁ-ի, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի, «Գագիկ Խաչատրյան» ԱՁ-ի, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի, «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնում կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը,
- «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար, քանի որ նշված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին,

բ) առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-12 չափաբաժինների համար,

գ) ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ,

դ) գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 17:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ս. Պետրոսյան

Անդամներ՝ _____ Վ. Սարգսյան

_____ Լ. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան